

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՂԵՏԷՆ ԵՏՔ

ԱՐՑԱԽԸ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԻ ՄԸ ԵՏՔ

Ուրեմն արդեն տարի մը անցած է այն ճակատագրական թուականին, երբ 1988 Փետրուարին հայութիւնը ընդոստ կ'արթննար իր խոր թմբիրէն, եւ ամէնուր կը հնչէր նոր անուն մը - Ղարաբաղ:

1988 Փետրուարին եւ անկէ առաջ ո՞վ լսած էր այս անունը, եւ կամ անոր պատմական բնորոշումը՝ Արցախ: Ապահովաբար շատ քիչեր: 1987 Հոկտեմբերին երբ Սեբգօ Միկոյեան խմբագրատուն հանդիպեցաւ եւ իրարու ծանօթանալէ ետք կը խօսակցէին մեզ շահագրգռող խնդիրներու շուրջ, իրեն հարցուցի թէ ի՞նչ էին կարելիութիւնները՝ Նախիջեւանը վերստանալու, Հայաստանի անբաժանելի մաս դարձնելու: Ան առանց տատամսելու պատասխանեց. «Նախիջեւանի մէջ աննշան թիւով հայեր կ'ապրին, եւ հետեւաբար անկարելի է - գէթ առ այժմ - նման նպատակ մը իրականացնելը: Սակայն պէտք է աշխատիք Ղարաբաղի վերամիացման համար. հոն բնակչութեան մեծ տոկոսը հայեր կը կազմեն»:

Ղարաբաղ:

Միկոյեանէն բաժնուելէ ետք պարտաւորուեցայ ֆարտսին դիմելու, եւ ապա նաեւ գիրքերու, որպէսզի այդ սփռուած ինքնապահովման մասին ծանօթութիւններ ունենայի: Մի ֆանի ամիս ետք, 1988 Յունուարին, երբ դարձեալ տեսնուեցայ իր եւ Զօրի Պալայեանին հետ Ուաշինկթընի մէջ, մօտ երեք ժամ Արցախի մասին եղաւ մեր խօսակցութիւնը, եւ ինչ որ գիրքերէն առեր էի՝ հիմնաւորուեցաւ եւ անկեղծ այդ երկու պատուական հայերուն տուած մանրամասն տեղեկութիւններով:

Այսպէս էր որ, ուրեմն, յանկարծ ունեցանք Արցախի հարց մը: Կարծեմ ուրիշ առիթով գրած եմ թէ «ժամանակն էր» կամ «ժամանակը չէր» ինչոր մը պէտք չէ յարուցանել, որովհետեւ ազգային հիմնական իրաւունքներ պաշտպանելու կամ անոնց վերատիրանալու համար ամենէն յարմար ժամանակը միշտ ալ ներկան է, այս օրը, այս ժամը, այս վայրկեանը:

Հետեւաբար գլխաւոր խնդիրը գոր պէտք է ֆննհանք այսօր հետեւեալն է. Արցախի շարժումին սկզբնաւորութենէն տարի մը անցած է, եւ ի՞նչ ձեռք բերած ենք տասներկու ամիսներու ընթացքին:

Ըստ երեւոյթի՝ մեծ բան մը ձեռք բերած չենք: Արցախը տակաւին մաս կը կազմէ Ատրպէյճանի. Հենրիկ Պօղոսեան, որ յաջորդելով տիրապետչական Գեորգովի որպէս Արցախի համայնավար կուսակցութեան առաջին Դարտուղար՝ մէկ օրէս սրբաբարձ կրցաւ պարտադրել թէ՛ Մոսկուայի եւ թէ Պաֆուի իր դիւանագիտական քաջադիպարութիւններով, եւ որ հիանալի հայրենասէր մըն է, վերջերս պարտաւորուեցաւ հրաժարիլ իր պաշտօնէն «առողջական պատճառներով»: Իր հրաժարականին լուրն անգամ պաշտօնապէս չյայտարարուեցաւ, եւ մանրատառ երկար յօդուածներու մէկ անկիւնը այդ մասին անցողակի ակնարկութիւն մը միայն եղաւ: Պօղոսեան շատ կարեւոր ուժ մըն էր արցախեան շարժումին մէջ - չափաւոր, դիւանագետ, փոքրիկին առջեւ ճակատ ուրպէս եղէզ, սակայն ամուր ու հաստատ՝ ինչպէս Արցախի թանձր լեռները: Երիտասարդ էր եւ կրնար մեծագոյն օգտակարութիւնը ունեցած ըլլալ թէ՛ Արցախի եւ թէ Հայաստանի: Իր անկումը, հիւանդութեան ծիծաղելի՛ եւ ա՛յ մաշած-ֆոստած պատճառաբանութեամբ, մեզի համար կարեւոր կորուստ մըն է, Ատրպէյճանի ալ յաղթանակը:

Պօղոսեանի շատ արագ անհետացումը անտէր պիտի չձգէ Արցախը. այդ փոքր երկրամասը դարբերու ընթացքին մեր ժողովուրդին ընծայած է լաւագոյն պետական գործիչներ, մտաւորականներ, գիւնտարականներ. վստահ եմ որ Պօղոսեանի կարողութեամբ հոյլ մը արցախցիներ հո՛ն են, պատրաստ՝ գործի անցնելու եւ կամ արդէն իսկ գանազան պաշտօններու վրայ՝ տէր կը կանգնին ժողովուրդին:

Արցախը Հայաստանին վերամիացած չէ տակաւին: Դժուարութիւնները անհամար են այսպիսի միութեան մը իրականացման ճամբուն վրայ: Այո՛, մէկ տարի ետք՝ մեծ բան մը ձեռք բերած չենք ըստ երեւոյթի: Արցախը մէկ փորձութենէն միւսին անցաւ տասներկու ամիսներու ընթացքին եւ ոչ մէկ ապահովութիւն կայ որ դժուարութիւններն ու փորձանքները պիտի չշարունակուին: Սուսկայիթի ջարդէն ետք ընդհարումներ պատահեցան նաեւ Արցախի մէջ, որոնք բարեբախտաբար ծանր հետեւանքներ չունեցան:

Սակայն Արցախի վերամիացման շարժումի ամենէն կարեւոր արդիւնքը կը հանդիսանայ այս տարուան Յունուար 12ին Սովետական Միութեան կառավարութեան որոշումը՝ այդ ինքնավար մարզը ժամանակաւորապէս եւ վարչականօրէն կապելու Մոսկուայի, եւ գայն կառավարելու յանձնարարութեամբ մը գոր կը գլխաւորէ Արֆատի Վոլսկի, ուստի բարձր պաշտօնատար մը, որ անցեալ տարուան կէսին ի վեր արդէն Ստեփանակերտ կը գտնուի: Արդ, այս կարգադրութիւնը ի՞նչ նշանակութիւն ունի մեզի համար: Յունուար 12ի որոշումը երբ յայտարարուեցաւ, Հայաստանի մեր ժողովուրդը գայն ընդունեց հանդարտութեամբ, թեւ այդ օր եւ յաջորդ մի ֆանի օրերուն Երեւանի մէջ ուստի գիւնտարներու թիւը զգալիօրէն աւելցած էր, եւ հրասայելուն ներկայութիւնը անկի զգալի թէ՛ Լենինի Հրապարակին վրայ, թէ Օփերայի շէնքին առջեւ եւ թէ Երեւան ֆաղափ գլխաւոր մուտքերուն: Ընդհանուր կարծիքը այն էր թէ ներկայ պայմաններուն մէջ որոշումը ամենէն ընդունելի էր, եւ բոլորին աչքը յառած էր որոշումի մէկ բառին վրայ՝ *ժամանակաւոր*: Հայաստանի մէջ այդ բառին ամբիջապէս տրուեցաւ միակ քաջատրութիւն մը - Արցախի՛ մօտիկ ապագային Հայաստանի հետ վերամիացման անուղղակի խոստում մը: Եւ սակայն ես չեմ խորհիր թէ *ժամանակաւորը* անպայմանօրէն այդ խոստումը կուտայ, թեւ ամբողջ սրտով կը բաղձամ որ այդպէս եղած ըլլար: Պահ մը մտածենք անկողմնակալօրէն. թէ ազգերի ըլլալիմք, նոյն բառին մէջ պիտի չգտնուին գաղտնի խոստում մը՝ Արցախը Ատրպէյճանի մաս պահելու:

Ինչ ալ ըլլայ սակայն, Պաֆու այսօր գրեթէ մաս չունի Արցախի կեանքի կառավարման մէջ: Եւ ասիկա, ժամանակաւոր կամ ո՛չ ժամանակաւոր, մեծ ֆայլ մըն է այդ երկրամասի տնտեսական վերականգնումի գործին մէջ: Տնտեսական վերականգնում, ինչպէս նաեւ յառաջացում ազգային կեանքի բոլոր բնագաւառներէն ներս - դպրոցներու թիւի յաւելում, հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցում, հայ երաժշտութեան, գրականութեան, արուեստներու զարգացում, թատրոններու եւ թատերական խումբերու ստեղծում, եւ այլն, եւ այլն: Այս գործին մէջ հիմնական դեր պիտի ունենայ Հայաստան, որովհետեւ Մոսկուայի որոշումը յստակօրէն կը ճշդէ մեր հայրենիքին դիրքը:

Բայց, այս որոշումը նաեւ կրնայ չորս բարեբար հետեւանքներ ունենալ: Նախ, կը դադրին հակահայ բռնութիւնները Արցախի մէջ. բռնութիւններ՝ որոնք տարիներու ընթացքին թունաւորած էին մեր եղբայրներուն կեանքը, ահագին գոհեր խլած եւ պատճառ դարձած որ հայեր մեծ թիւերով գաղթեն ուրիշ վայրեր՝ Հայաստան, Վրաստան կամ Միութեան այլ երկրամասեր: Երկրորդ, կը դադրին նպատակաւոր ֆանդումները Արցախի հարիւրաւոր հայկական ճարտարապետական եւ այլ յուշարձաններուն, եւ, ընդհակառակը՝ մեծ թափով կը սկսի անոնց վերանորոգման եւ պահպանման աշխատանքը: Երրորդ՝ անկի մեծ թիւով հայեր կ'արտօնուին ուստիականական պաշտօնի անցնելու. ներկայիս ազգերիները մեծամասնութիւն են: Չորրորդ՝ միջոցներ կը ստեղծուին լուրձ հայկական տասներկուներով գիւղերը շէնցնելու եւ վերաբնակեցնելու: Գիւղերը, ինչպէս Հայաստան, Արցախի մէջ եւս մեր ազգային աւանդութիւններու շտեմարաններն են, պիտի ըստի՝ ամրոցները, եւ պէտք է պահուին ի գին ամէն ինչի: Սովետական կառավարութիւնը ոչ մէկ արգելք ունի վերաբնակեցումի այս գործին: Եթէ տնտեսական պայմանները ստեղծուին - եւ Մոսկուա անցեալ Յունուարին ի վեր մի ֆանի հարիւր միլիոն ուստի տրամադրած է Արցախի վերանորոգման - այն առեւն գիւղերը կը բարգաւառին եւ հազարաւորներ որոնք տարիներու ընթացքին գաղթած են Ատրպէյճանի այլ վայրեր կամ Հայաստան՝ կը վերադառնան եւ կը շէնցնեն հայրենական օճախը:

Գիւղերու վերաբնակեցմամբ կ'անկեղծ թիւը Արցախի մէջ բնակող հայութեան:

Այս կէտը կ'ուզեմ շեշտել, որովհետեւ առանկապոյն ներկայութիւն հոն՝ կը նշանակէ անկի՛ ձայն եւ իրաւունք մեզի՛ Արցախը պահանջելու, գայն որպէս հայկական երկրամաս Հայաստանի վերամիացած տեսնելու: Անցեալ Հոկտեմբեր-Նոյեմբերին երբ հակահայ բռնութիւններն ու հալածանքները լայն չափերու հասան Ատրպէյճանի մէջ, մօտ 15,000 հայեր ապաստանեցան Արցախ եւ այժմ հոն բնակութիւն հաստատած են: Արդէն իսկ Արցախի հայութեան թիւը կը ներկայացնէ բնակչութեան ութսուն տոկոսը, ինչ որ սփռուած թափառում մըն է: Սակայն հայերու վերաբնակեցումը պէտք է շարունակուի, առաջնահերթ խնդիր ըլլայ ամբողջ հայութեան համար: Եւ կը խորհիմ թէ ժամանակը պիտի գայ - յուսամ շատ շուտով - երբ արտասահմանի հայութիւնը նիւթական եւ այլ օժանդակութեամբ գործնականօրէն պիտի մասնակցի Արցախի վերաշինութեան եւ հայերով վերաբնակեցման ամենակարեւոր գործին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՂԵՏԷՆ ԵՏՔ

(Շար. Յրդ Էջէն)

Արցախի կողքին ներկայիս դեմյանդիման կը գտնուինք նոյնքան եւ թերեւս ւաւելի ճակատագրական խնդրի մը հետ. այդ՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի փոխ-յարաբերութիւններու հարցն է: Անցեալ Փետրուարէն սկսեալ այդ յարաբերութիւնները հետզհետէ ւաւելի սրուած են եւ նոր ողորդութիւններու կարելիութիւնը մեզ բոլորս ւաւելի զգուշ եւ խոհեմ պէտք է դարձնէ: Տեղաբնակ հայերու նկատմամբ ձեռնարկուած սարսափի, հալածանքի, ւաւերումի եւ սպանութիւններու ֆաղափականութիւնը գլխաւոր պատճառն է յարաբերութիւններու ցրտացման եւ մինչեւ իսկ խզումի կարելիութեան: Երկիր մը, իր կառավարութեամբ եւ կուսակցական ու ոստիկանական մեքենայով լծուեցաւ հալածանքի եւ վայրագութեան այս ֆաղափականութեան, եւ անգամ մը եւս փաստեց թէ թուրքը նոյն հոգեբանութիւնը կը շարունակէ պահել: Այդ ֆաղափականութեան հետեւանքն էր մօտ 100,000 հայերու փախուստը Ատրպէյճանէն եւ ապաստանիլը Հայաստան: Ուրիշ հազարաւորներ հանգրուան գտած են Վրաստան բայց մանաւանդ Կովկասի զանազան շրջաններ: Փոխադարձաբար, մօտ 200,000 ազերիներ որոնք Հայաստան կը բնակէին, «փախուստ» տուած են եւ ապաստանած Ատրպէյճան, թէեւ անոնք ո՛չ մէկ հալածանքի կամ բռնութեան ենթակայ եղած էին հայերու կողմէ: Արդ, Սովետական Միութեան կառավարութիւնը որոշում անցուցած է գաղթականներու վերադարձին, միայն քայլ մը նկատելով «ինտերնացիոնալիզմ»ի գեղեցիկ փաստ մը՝ աշխարհին ցուցադրուելու: Փախստական ազերիները ջախջախիչ մեծամասնութեամբ կը փափաքին Հայաստան վերադառնալ, որովհետեւ կարօտեցած են իրենց համեմատական հանգիստ եւ դիրքին կեանքը: Հայերը չեն ուզեր վերադառնալ Ատրպէյճան, որովհետեւ նման բան մը կամովին դէպի մահ երթալ պիտի նշանակէր: Հայաստանի կառավարութիւնը, իր վրայ գործադրուող ճնշումի իբր հետեւանք, գրեթէ կը պարտադրէ հայ գաղթականներուն՝ Ատրպէյճան վերադառնալ: Սակայն այս գաղթականները, որոնցմէ թերեւս տաս կամ քսան հազարը մեռան 7 Դեկտեմբերի երկրաշարժին ընթացքին, Ատրպէյճան պէտք է չէ՛ Դեկտեմբերի երկրաշարժին ընթացքին, Ատրպէյճան պէտք է չէ՛ վերադառնան: Անոնք պէտք է բնակեցուին 200,000 ազերիներու տունները, պէտք է շէնցեն լքուած գիւղերը, եւ այսպէս վերականգնեն երկրագործութիւնն ու անասնապահութիւնը - այնքան կարեւոր մեր հայրենիքին համար: Փոխադարձաբար, ազերիները պէտք է մնան ուր որ են հիմա - Ատրպէյճան: Պաճուի կառավարութիւնը մասնաւորաբար կը պնդէ

գաղթական հայերու վերադարձին վրայ, որովհետեւ անոնց մէջ կը գտնուին մասնագէտ ճարտարագէտներ, բանմուտներ, հմուտ գործաւորներ, գիտնականներ, որոնց բացակայութիւնը գիրեմք դժուարութիւններու առջեւ դրած է:

Որոշ է որ Հայաստանի կառավարութիւնը բաւական նեղութիւն պիտի ունենայ Ատրպէյճանէն գաղթածներուն սնունդ եւ հագուստ եւ բնակարան հայթայթելու կենսական գործին մէջ: Այդ գաղթականներուն վիճակը ւաւելի վատ է քան երկրաշարժի շրջանի բնակիչներունը, որովհետեւ մինչ այս վերջինները կը ստանան պետական եւ դուրսէն դրկուած ամէն կարգի օգնութիւն, գաղթականները անմասն կը մնան այդ օժանդակութենէն: Անոնք ցրուած են Հայաստանի ամէն կողմ, Վրաստանի սահմանամերձ Կալինինօ ֆաղափէն մինչեւ Սեւանի շրջանը եւ հարաւ՝ Եդէգնաձոր: Մեծ մասը կը գտնուի աղբատութեան մէջ. այր մարդիկ, քիչ բացառութեամբ, անգործ են: Այս ձիւն ու ձմեռին անոնք կը փորձեն կերպով մը տոկալ ամէն ինչի, ապրիլ, տեւիլ:

Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնները կրնա՞ն բարելաւուիլ. ոչ ոք կրնայ գուշակութիւն մը ընել, որովհետեւ շատ բարդ խնդրի մը առջեւ կը գտնուինք, յի՛ մեծ անակնկալներով ու նոյնիսկ ողորդութեամբ: Այս պատճառով է որ Հայաստան, Արցախ կամ արտասահման ծայրայեղ կերպով զգուշ պէտք է ըլլանք մեր արարքներուն բայց մանաւանդ մեր բարձրորակ յայտարարութիւններուն մէջ, յաւելեալ բարդութիւններ չստեղծելու համար:

Չեմ խօսիր Արցախի հարցով հայութեան վերագարթօնքին եւ յարակից նիւթերու մասին, որովհետեւ անոնք կրնան առանձին յօդուածի մը նիւթ դառնալ:

Արցախը այսօր նոր վարչաձեւի ենթակայ է եւ տեղի հայերը առաւելագոյն պէտք է օգտագործեն պատեհութիւնը:

Հայաստան երկրաշարժի աղէտին հետեւանքները բառնալու համար հսկայական աշխատանքի լծուած է, եւ ունի յաւելեալ պարտականութիւնը Ատրպէյճանէն գաղթած հայերուն հոգ տանելու:

Արտասահմանի հայութիւնը գորաշարժի ենթարկուած է, օգնութեան հասնելու Հայաստանին:

Կը թուի թէ ամբողջ հայութիւնը կ'անցնի վերակազմակերպումի, վերանորոգումի, աղէտներու հետեւանքները վերցնելու, Հայաստանի եւ Արցախի մէջ բարօր եւ շէն կեանք վերահաստատելու շրջանէն: Այս աշխատանքը խաղաղ պայմաններ կ'ենթադրէ:

Մաղթենք որ գէթ այս անգամ բնութիւն եւ մարդիկ այդ խաղաղութիւնը տրամադրեն բոլորիս: